*րին տունն է միայն պարապով, և ուր կան որդիք թագաւորին. Լերան գլուխն է և ամուր բերդ եւ ԴԵՌ (4-5 հազար) մարդ պահեն զբերդն. և երկրի լայնութիւնն առեն 5 ամսէն ճամբայ է. և այսքան երկրումն 6 թագաւորութիւն կայ քրիստոնեայ. բայց գլուխն Դումպիոյ թագաւորն է իբրեւ իմփէրաթոր. միւսք թագաւորքն հնազանդին սմա և որ ինչ տղայք ծնանին այս 6 թագաւորքն և թագուհիքն, ողորկեն (= ուղարկեն) Դումպիոյ թագաւորին մօտն, որն որ կամի զայն, զայն թագաւոր դնէ իւրեանց հօր տեղն։ Իսկ թագաւորն է յոյժ բարեպաշտ և աստուածասէր, և ամէն օր երկու անգամ ի դիւան կու նստի առաւօտ և երեկոյ. 12 զատով և 2 մեծ վէղերով, 2 մեծ թուր ի ձեռաց երկու վէղրին։*

*Դատաստանագիրքն առաջեւներն, այս օրէն դատաստանն վաղն չեն ձգել, թէ չէվիշ թէ կամանել և ինչ տեղ որ Դիւան կանէ մեծ փիայյացայ է. Գ (3) մեծ ծառ կայ փշի որ հաստութիւն Գ (3) մարդ չէ կարող պատել և գլխի ճղներն հաւասարք են եւ այնչափ լայն է ծառի գլուխն որ տակի շուքն ԴՌ (4000) մարդ կու նստի. և բնաւ սքայ չունի, այլ աղով կանեն ալիչ վէրիչն։ Եւ յորժամ թագաւորն դուրան ելանէ այս է զենամթն։ 24 յետակով, 24 զամթրով, ԻԴ. (24)*